6 (88). ՕԽՏԸ ԳԼԽԱՆԻ ԴԵՎԸ

Մե ավջու աղամ կըլլի։ Հարն օր մահացավ՝ ինքը ուսումն առավ։ Ուսումն օր առավ աղ մարթը էկավ մորը սըխմեցուց, թե.— Մա՜րի, իմ հարըս ի՞նչ փեշրկի էր։

Թե.— Օղուլ, ավջի էր։

— Է՛, բանըմ չէ՞ մնացե սիլայեն։

Հրպը.— Օղուլ, իրան թախումը տիա այդտեղ է։

— Հարըս տանը մեռա՞վ, թե ուրուշ վտանքի է էկե։

— Ավջութան քնաց, ետ չէկավ։ Օխտը գլխանի դևը կըպատահի մեշին մեշը, բռնեն ու տանին կոխեն կը պղինձը, հալվընին է կալիգորը կախեն կը։

Նորեն կելլե էսիկ, մորը սխմեսնե կը, կըսե.— Հարըս վե՞ր ճամփով քնաց, ի՞նչ հալավ կար վրան։

— Օղուլ,— ըսավ մարը,— հարրդ մե շալվարմ էր հաքե՝ ծլնկվին պատռտած, գուրպա էի քցե[1] պատռտած տեղերը, մոխրագույն էր, մե փափախըմ ունիր, կրրկին[2] քով էր պառկե՝ մե թարաֆն է վառած էր։

Հ՚ելավ էսոր մարը էրթիք, ճամփան ցույց տվեց թե.— Դե այման Դիլիսկը է քնացե։

Քնաց հ՚ելավ Դիլիսկու թարաֆն օրա, ի՛նչ կաշես՝ մե ամառանոցըմ կա. ճաշը կէփի, հեչ մարթմա չկա, պղնձին մոտեցավ, կուշտըմ կերավ, էկավ նես մտավ, հորը որսորդութանը սիլահն ու հալվընները տեսավ, էդտեղ տեսավ, օր հարը էղտեղ է բաթրրմիշ էղե։

---

1 Կարկատել (Ծ. Բ.)։

2 Կրակի (Ծ. Բ.)։

Ինքը մթանը կեցավ, կեցավ, օխտը գլխանի դևը ծառըմ պոկել է ու իրեն որսորդութան ղուշերը կապել է ծառին, ծառն ա քոքեն հանել է, շալկել է քուքա։ Աս մարթը կեցավ, տեսավ դևն էկավ, չըլլելու բան է, կեցավ դռանը էտտին։ Դևն օր էկավ թափեց ապրանքը, նես պիտի քար, էսիկ քաշեց թուրը, կպուց օխտը գլխանի դևին գլխնուն, սպանեց, վերչացուց։ Էսան, էնան ընկավ սահմանին մեչը, տեսավ օր մե հորըմ կա։ Տարավ էդոնց ջընդրգը լցեց հորը, քարն ա բերնին թրեց։

«Է՞, լավ, ինչ էնեմ էրթամ, աս ամառանոցը ինձի մնաց. ես կմնամ աստեղ։ Էրթամ մորս դեղեն փերեմ էստեղ մնամ»։ Էսիկ մորն առավ էկավ էդ դևերուն ամառանոցը։

Էդ կնիկը քիչըմ խորամանկ կնիկմարթ էր։ Էսիկ մանչուն թե.— Ի՞նչ էրար էդ դեվերը։

Մանչն ըսավ.— Ջարդեցի, այդի հորը լցի։

Մանչն օր իրան ձին նստավ որսորդութեն քնաց, ադ մարը տարավ վեռամ[1] ջուր ադ հորին բոլորը լցեց։ Բոլորն օր լցեց, հորը ծակ էր էղե, ալայեն պղտի դևը սաղցավ։

Կնիկմարթն ըսավ.— Ինչ օր ըսեմ՝ անգաճ պիտի էնես, թե չէ մանչուս կըսեմ քուքա։ Դու կըլլիս ինձի էրիկ, ես քեզի կըլլիմ կնիկ։ Ես առանց էրիկ յոլա չեմ էրթա։

Ինը ամիս, ինը դըխխըն անցավ, աս կնիկմարթը պառկավ մանչ տղամ փերեց։ Մանչուն սովորութունն էն էր, օր օխտ վերսի վրա ախպուրըմ կար, որսեն օր քուքար, լվացվիր, սրփըվիր, տուն քուքար։ Մարն ինչ մտածեց, տարավ բալուլ էրավ ու տղան ցկեց ախպրին ղամշլուղը օր տղան չտեսնի։ Էկավ մանչն օր ձիեն իջավ լվացվիր կը, մե էրեխիմ ձենն առավ։ Քնաց տեսավ ի՞նչ, անլրման տղա, բալուլին մեչ, առավ ձիուն թրեց, տուն փերեց։

— Մարի ջան, իսի տղին լավ աշե, ասված մեղի տղա է տվե։

Մարն ըսավ.— Ինչըղ էնենք պահեմ կը, ինսընի դամար է, ծծերս կը տրորեմ կաթ քուքա, ած ունինք՝ կթենք կը, կաթով կերպովըմ պահեմ կը։

Է՞, հեքիաթի պատմութունը մե օրը մե տարիմ է։ Էղավ տղան տաս տարեկան։ Տասն ավուր տղան էղավ տաս տարեկան։ Ախպարն օր էկավ, վրան էնքան սորվավ օր, ախպորը ախպրին քով դեմ կէրթար, էնոր հետ նորից դառնար տուն քուքար։

Օրվանըմ մեկը թոփալ դևը կռահեց գործը. օր էդ մանչը իրան սնունթն է՝ ամեն գաղտնիքը դիտե։

---

1 Դուլլ (Ծ. Բ.)։

Կնիկն ըսավ.— Ինչ օր ըսեմ կըրնա՞ս պեճըր էնե, դու էդիկ ըսե։

Թոփալ դևը կըսե թե.— Վեռամ ջուը տար հորին բոլորը լից, բանջար կը բուսնին, դևերն ա մեռան, էլ չեն սաղնա։ Բանջարը ածի կաթով կէփես, էրկու մանչդ քուքան իրիկունը կուտեն, կը մեռնին, մենք կմնանք երկուսս՝ էրիկ կնիկ։

Էդ պզտի ախպարը էղավ քսան տարեկան, մեծ ախպորը հետ որսորդութան կէրթար։

Էկան ախպրին գլոխը ձիաններեն իչան օր լվասվին, տուն պիտի քան։

— Ախպար ջան, շատ կը խնթրեմ, օր տանը ղեկը ինձի տաս։

Իրիկունը ձիաներեն իչան թե չէ, մարը վազեց թե՝ «Արի՛ք, բանջար եմ էփե կաթով, հոգեստընուդ մեռնիմ»։

Բանջարը ամընները լցեց թրեց սեղանին վրա։

— Չէ՛, մարի ջան, ամանմ ա քեզի լից։— Լցեց, էղավ իրեք աման։— Դե մարի ջան, ըվըլ մեծը դու ես, դու սիֆտը կի, օր մենք ա ուտենք։

Մարը բանջարը կերավ ու տրաքավ։ Նըյսը։

— Տեսա՞ր, ախպար ջան, մենք պիտի մեռնեինք էրկուսս։

Մեծ ախպարն ըսավ՝ էս ինչ բան է։ Այնի պզտի շկաֆն օր կա՝ դևն ա էնտեղ է, ամեն օր իրար կը լկռթվին էղե, մենք ա հեչ բանե խաբար չենք էղե։

Դևին ա՝ փերին ջարթ ու խուրթ էրան, սպանեցին լցին հորը։ Մնաց ամառանոց էրկու ախպորը։

— Է՛ ախպար,— ըսավ,— էդման չի ըլլի, քեզի կինըմ փերենք, էսման չի ըլլի, մենք որսի կէրթանք։

Կէրթան կելլեն Մըսրը քաղաքը։ Դես ու դեն կը պըտրտին, էսդին, էնդին՝ սալըղը կառնեն Շըշո բըգին ախչկան։ Խոսքը կառնեն, իրիկունը հարսնիքը կէնեն, կելլեն քուքան էլի իրենց ամառանոցը։ Քառասուն օր հարսնիք կէնեն էլ սարը դաչաղ ու հարամի բաշի չի մնա, փերեն կուտեն, խմցնեն կը։ Էրկու ախպրով ադտեղ կը մնան, հարսը հաց ու ջուր կէնե, ախպրնին է որսը կը փերեն, էնիկ թափե կէնե, հանին կը իրենց մուրազին։ Ավջուն տղան կհասնի իրեն մուրազին։